ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ՝ /Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

«31»_____08_____2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Արգիշտի Առաջին արքայի անվան հ. 61 հիմն. դպրոց

VI[բ] դասարան

Դասղեկ՝ Զոյա Դանիելյան Դերենիկի

«2023-2024» ՈՒՍՏԱՐԻ

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

VI[բ] դասարանում սովորում է 17 աշակերտ՝ 6 տղա, 11 աղջիկ: Երեխաներն աչքի են ընկնում իրենց խելացիությամբ և ակտիվությամբ, մասնակցում են ներդասարանական և արտադասարանական միջոցառումների: Դասարանում տիրում է ընկերական մթնոլորտ, երեխաների մեջ ձևավորված են պատասխանատվության, փոխօգնության և համագործակցության հատկանիշներ: Երեխաներից մի քանիսը զբաղվում են սպորտով, մի քանիսը՝ հաճախում երաժշտական խմբակների:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

- Համախմբել դասարանը, դարձնել համերաշխ կոլեկտիվ:
- Աշակերտների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում:
- Ապահովել դասարանի ընդհանուր զարգացվածության մակարդակը, հասնել բոլոր աշակերտների գիտելիքների որակի բարձրացմանը:
- Երեխաների մեջ դաստիարակել հայրենասիրություն, հարգանք և հոգատարություն մեծերի նկատմամբ:
- Մշակել քաղաքավարության հմտություններ՝ ճիշտ և գեղեցիկ դիմելաձև, խոսքի մշակույթ:
- Ուսուցման ընթացքում զուգակցել օգտակարը և հաճելին:

3. Հայեցի դաստիարակություն

✓ ***Հոգևոր դաստիարակություն***

Հոգևոր դաստիարակության կարևոր նախապայմանը բարությունն է: Ազգասիրության ճիշտ ընկալման միջոցով աշակերտները կդառնան հայրենասեր, կպահպանեն լեզուն ուկրոնը: Ծանոթացնել Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոներին, լսել երեխաների կածիքը այս կամ այն եկեղեցի այցելություն կազմակերպելու հարցում: Կարևորել եկեղեցու դերն ու նշանակությունը: Կատարել քննարկումներ եկեղեցի և մշակույթի այլ օջախներ կատարած այցերից ունեցած տպավորությունների մասին:

✓ ***Գեղագիտական դաստիարակություն***

Զարգացնել աշակերների գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը, տեսողական հիշողությունը և տարածական պատկերացումները:

Արթնացնել հետաքրքրություն գեղեցիկի նկատմամբ՝ արվեստում և իրականության մեջ: Մեծ ուշադրություն դարձնել ազգագրական, ժողովրդական ինչպես նաև դասական երգ-երաժշտությանը: Կատարել քննարկում հայ և արտասահմանյան կոմպոզիտորների, նկարիչների, այլ արվեստագետների գործերից: Կազմակերպել տեսաֆիլմերի դիտում և սահիկաշարի միջոցով պրեզենտացիաների կազմակերպում համակարգչային կաբինետում:

- ✓ ***Ռազմահայրենասիրական դաստիարակություն***

  Յուրաքանչյուր աշակերտ հպարտությամբ պետք է իմանա Հայաստանի Հանրապետության օրհներգը: Իմանա Հայաստան պետության սահմանները անառիկ պահելու կարևորությունը, հարևան պետությունների հետ հարաբերությունները և իրեն պատկերացնի հայոց բանակի ապագա զինվոր: Բնավորության մեջ պետք է ձևավորել հայրենասիրություն: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայրենյաց պաշտպանների նկատմամբ: Աշակերտները իմանան հայոց բանակի կարևոր դերի մասին հայոց պետականության կայացման և պահպանման գործում:

- ✓ ***Ֆիզիկական դաստիարակություն***

  Իրականացնել ուսուցման կազմակերպման սանիտարահիգիենիկ հսկողություն: Ստեղծել ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմաններ: Ձևավորել բացասական վերաբերմունք վնասակար սովորությունների հանդեպ: Աշակերտներին բացատրել առողջ ապրելակերպի նշանակության մասին:

- ✓ ***Աշխատանքային դաստիարակություն***

  Խթանել աշխատանքի նկատմամբ կառուցողական վերաբերմունք: Անցկացնել զրույց-զեկույցներ աշխատանքի վերաբերյալ: Աշակերտներին սովորեցնել հարգել դպրոցի սանիտարական աշխատողների աշխատանքը:

- ✓ ***Բնապահպանական դաստիարակություն***

  Սովորողների մոտ ձևավորել այն համոզմունքը, որ նրանք պետք է լուծեն ոչ թե գլոբալ էկոհարցեր, այլ հիմնահարցեր, որոնք վերաբերվում են իրենց շրջապատին: Պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները:

4. Դպրոց-ընտանիք կապը

Դպրոց-ընտանիք կապն ապահովել ծնողական ժողովների, առանձին և առցանց հանդիպումների միջոցով: Ապահովել ծնողական խորհրդի անխափան աշխատանքը: Ծնողներին մասնակից դարձնել դպրոցում կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումներին:

հ/հ	ԱԱՀ	Ծնող. ամսաթիվ	Սեռ	Կարգավիճակ
1.		14/01/2012	ար.	ապահովված
2.		07/09/2012	ար.	ապահովված
3.		31/05/2012	իգ.	ապահովված
4.		22/05/2012	ար.	ապահովված
5.		19/11/2011	իգ.	ապահովված
6.		14/03/2012	իգ.	անապահով
7.		22/03/2012	իգ.	ապահովված
8.		28/11/2012	իգ.	ապահովված
9.		25/06/2012	իգ.	ապահովված
10.		01/01/2012	ար.	անապահով (փարոսակիր)
11.		11/05/2012	ար.	ապահովված
12.		12/06/2012	իգ.	ապահովված
13.		17/11/2012	իգ.	ապահովված
14.		04/02/2012	իգ.	ապահովված
15.		08/06/2012	իգ.	ապահովված
16.		09/01/2012	իգ.	ապահովված
17.		07/09/2012	ար.	ապահովված

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Դասղեկի ժամի թեման	Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Կատարողներ
1-ին շաբաթ 01.09.23թ.	Գիտելիքի օր		
2-րդ շաբաթ	Կազմակերպչական հարցեր	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում:	Դասղեկ, աշակերտներ
3-րդ շաբաթ	«Անկախության անգնահատելի նշանակությունը»	«Անկախություն» հասկացության նշանակությունը. Շեշտը դնել պատասխանատու քաղաքացիներ դաստիարակելու վրա: Երեխաների մոտ ձևավորել ճիշտ պատկերացումներ ազատ ապրելու և մեծ դժվարությամբ ձեռք բերված այդ ազատությունն ու անկախությունըգնահատելու վերաբերյալ:	Դասղեկ, աշակերտներ
4-րդ շաբաթ	«Լույսի և բարու սերմնացաններ»	Ուսուցչի օրը առիթ է ընձեռում երախտիքի խոսքեր հղել ուսուցիչներին շնորհակալ աշխատանքի համար: Պատրաստել շնորհավորական ուղերձներ՝ նվիրված ուսուցչի օրվան: Սովորողները կկարևորեն ուսուցչի կատարած աշխատանքը, երախտապարտ կլինեն նրանց:	Դասղեկ, աշակերտներ
5-րդ շաբաթ	«Ընկերությունն իմ պատկերացմամբ»	«Ընկերություն» թեմայով քննարկում: Աշակերտների մոտ ձևավորել ընկերասիրություն, սեր, հարգանք, զիջողականություն մեկը մյուսի նկատմամբ:	Դասղեկ, աշակերտներ
6-րդ շաբաթ	«Եթե ես լինեի…»	«Եթե ես լինեի…» թեմայով քննարկում: Նպատակն է սերմանել այն գաղափարը, որ բոլորը	Դասղեկ, աշակերտներ

		հավասար են՝ անկախ ֆիզիկական, առողջական, սոցիալական վիճակից:	
7-րդ շաբաթ	«Տվյալ բնակավայրում, տարածքում հնարավոր տեխնածին վթարները»	Դասարանում անցկացնել քաղպաշտպանության թեմայով զրույցներ: Ծանոթացնել տվյալ բնակավայրում, տարածքում հնարավոր տեխնածին վթարների տեսակներին, կանխարգելման ուղիներին:	Դասղեկ, աշակերտներ
8-րդ շաբաթ	«Շփման ձևեր և միջոցներ»	Սովորողները կսովորեն ճիշտ հաղորդակցվել՝ տարբերելով բարեկիրթ և անբարեկիրթ խոսքը: Կկարողանան կարևորել դասերին և դասամիջոցներին իրենց ճիշտ պահվածքը:	Դասղեկ, աշակերտներ
9-րդ շաբաթ	«Ես պատասխանատու եմ իմ արարքների համար»	Աշակերտների մեջ ձևավորել պատասխանատվություն, արածը քննադատելու և վերլուծելու կարողություն ու հմտություն: Ստուգել աշակերտների պատասխանատվությունը ուսման, դասերի հաճախման, դասարանական և արտադասարանական աշխատանքների հանդեպ:	Դասղեկ, աշակերտներ
10-րդ շաբաթ	«Կարգապահություն»	Շեշտը դնել աշակերտների պահվածքի վրա թե՛ դասի ընթացքում, թե՛ դասամիջոցին: Խոսել կարգապահության կարևորության մասին:	Դասղեկ, աշակերտներ
11-րդ շաբաթ	«Բոլորս նման ենք, բոլորս տարբեր ենք»	Նպատակն է վեր հանել աշակերտների ազատ մտածելու և արտահայտվելու կարողությունները:	Դասղեկ, աշակերտներ
12-րդ շաբաթ	«Ցանկացած աշխատանք կարևոր է»	Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Աշակերտներին տալ այն գաղափարը, որ կարողանան գոյատևել ներկայիս պայմաններում:	Դասղեկ, աշակերտներ

13-րդ շաբաթ	«Անհատական պաշտպանության միջոցներ», «Օդային տագնապ և ուշադրություն բոլորին ազդանշանները»	Նպատակն է աշակերտներին ծանոթացնել անհատական պաշտպանության միջոցներին: Ներկայացնել «Օդային տագնապ և ուշադրություն բոլորին ազդանշանները» լսելուց հետո անհրաժեշտ քայլերը: Դիտել տեսաֆիլմ:	Դասղեկ, աշակերտներ
14-րդ շաբաթ	Առաջին կիսամյակի ամփոփում	Նպատակն է վերլուծել և ամփոփել ուսումնական տարվա առաջին կիսամյակը, ձեռքբերումները և բացթողումները:	Դասղեկ, աշակերտներ
15-րդ շաբաթ	«Իմ բացթողումները և հնարավորության սահմանները»	Ամփոփել առաջին կիսամյակի արդյունքները, աշակերտների հետ քննարկել երկրորդ կիսամյակի անելիքները:	Դասղեկ, աշակերտներ
16-րդ շաբաթ	«Հայոց բանակ հաղթական»	Ներկայացնել Հայոց բանակի ստեղծման կազմավորման ընթացքը, անցած հերոսական ուղին՝ աշակերտների մեջ սերմանելով հայրենասիրություն: Պատրաստել պաստառ՝ «Հայոց բանակ հաղթական» խորագրով:	Դասղեկ, աշակերտներ
17-րդ շաբաթ	«Գիտելիքն անգնահատելի արժեք է»	Անցկացնել կրթության միջազգային օրվան նվիրված քննարկում, աշակերտներին բացատրել կրթության կարևորությունը:	Դասղեկ, աշակերտներ
18-րդ շաբաթ	«Ազգային տոներ»	Հստակեցնել ազգային տոների նշանակությունը, առանձնահատկությունները:	Դասղեկ, աշակերտներ
19-րդ շաբաթ	«Տյառնընդառաջ»	Նպատակն է սովորողներին ներկայացնել Հայոց եկեղեցու գեղեցիկ տոներից մեկի՝ Տյառնընդառաջի խորհուրդն ու ծագումնաբանությունը: Միասին նշել տոնը և շնորհավորել միմյանց:	Դասղեկ, աշակերտներ
20-րդ շաբաթ	«Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»	Անցկացնել թումանյանական շաբաթ: Ներկայացնել գիրք կարդալու կարևորությունը,	Դասղեկ, աշակերտներ

		հանձնարարել գիրք կարդալ:	
21-րդ շաբաթ	«Մեր բնակավայրում, տարածքում հնարավոր բնական աղետները»	Նպատակն է սովորողներին բացատրել, որ բոլոր բնակավայրերում էլ առկա են որոշակի ռիսկեր: Աշակերտներին ծանոթացնել մեր բնակավայրում առկա հնարավոր աղետներին և վտանգներին:	Դասղեկ, աշակերտներ
22-րդ շաբաթ	«Գարնան զարթոնք»	Պատրաստել պաստառ՝ «Գարնան զարթոնք» խորագրով: Աշակերտներին հանձնարարել պատրաստել գարնանը նվիրված բացիկներ և շնորհավորել միմյանց գարնանային տոնի առթիվ, սովորել գարնանը նվիրված բանաստեղծություններ:	Դասղեկ, աշակերտներ
23-րդ շաբաթ	«Մայրիկիս նման չկա ոչ մի տեղ»	Նպատակն է աշակերտներին սովորեցնել հաճելի պահեր պարգևել հարազատներին, այս դեպքում՝ մայրիկներին: Աշակերտներին հանձնարարել դասարանում պատրաստել շնորհավորական բացիկներ՝ իրենց սրտի ջերմ բարեմաղթանքներն ուղղելով իրենց մայրիկներին:	Դասղեկ, աշակերտներ
24-րդ շաբաթ	«Խառնվածք և բնավորություն»	Սովորողներին ներկայացնել, որ խառնվածքը մարդու մոտ արտահայտվում է ի ծնե, իսկ բնավորությունը՝ կյանքի ընթացքում: Նպատակն է ծանոթացնել խառնվածքի և բնավորության տեսակներին: Դասարանում վարժությունների, խաղերի և թեստերի միջոցով բացահայտել աշակերտներից յուրաքանչյուրի խառնվածքն ու բնավորությունը:	Դասղեկ, աշակերտներ

25-րդ շաբաթ	«Կոնֆլիկտը մարդկային հարաբերություններում»	Աշակերտներին բացատրել, թե ինչ է կոնֆլիկտը, ինչպես է այն առաջանում, որոնք են դրա դրական և բացասական կողմերը, դրա տեսակները, լուծման հնարավոր ուղիները, կոնֆլիկտի խաղաղ լուծման հմտությունները: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողականության մթնոլորտ: Սովորեցնել, որ ցանկացած դեպքում կարելի է խուսափել կոնֆլիկտային իրավիճակից, եթե դիմացինը փորձի հարգել ուրիշների կարծիքը:	Դասղեկ, աշակերտներ
26-րդ շաբաթ	«Ես մի մասնիկն եմ իմ քաղաքի, համայնքի»	Նպատակն է սովորողներին բացատրել, որ չպետք է անմասն մնալ համայնքային կյանքից: Կարևոր է սովորեցնել, որ բոլորս պատասխանատու ենք ոչ միայն մեր, մեր ընտանիքի ու հարազատների համար, այլ նաև պատասխանատվություն ենք կրում մեր քաղաքի, համայնքի համար: Ներկայացնել համայնքի անդամների իրավունքներն ու պարտականությունները:	Դասղեկ, աշակերտներ
27-րդ շաբաթ	«Մեր երկրի հերոսական անցյալը»	Նպատակն է սովորողներին ծանոթացնել մեր երկրի հերոսական անցյալին ու ներկային: Պատմել հերոսական դրվագներ՝ սերմանելով հայրենիքին նվիրում և հայրենասիրություն:	Դասղեկ, աշակերտներ
28-րդ շաբաթ	«Մարդիկ, որոնց հանդիպում եմ ամեն օր»	Նպատակն է սովորողներին բացատրել, որ իրենց միջավայրից, շրջապատող մարդկանցից կախված կարող է փոխվել նաև իրենց վարքը, պահելաձևը, շփման ազատությունը:	Դասղեկ, աշակերտներ

		Սովորեցնել հարգալից լինել, ճիշտ կեցվածք դրսևորել ամեն օր իրենց հանդիպող մարդկանց հանդեպ:	
29-րդ շաբաթ	«Իմ հայրենիքի հերոսական պատմության հայտնի էջերը»	Դիտել տեսաֆիլմ «Իմ հայրենիքի հերոսական պատմության հայտնի էջերը», անցկացնել քննարկում՝ «Ինչո՞վ եմ կարող ես հպարտանալ»:	Դասղեկ, աշակերտներ
30-րդ շաբաթ	«Արցախյան հերոսամարտը»	Նպատակն է ներկայացնել Արցախյան հերոսամարտի նշանակությունը, միասի տեսաֆիլմ դիտել:	Դասղեկ, աշակերտներ
31-րդ շաբաթ	«Ազատամարտի հերոսները»	Նպատակն է ծանոթացնել ազատամարտի հերոսներին, նրանց կատարած սխրանքներին: Ցուցադրել նրանց նկարները: Ներկայացնել մեր համայնքից ազատամարտին մասնակցած ազատամարտիկներին, հերոսներին: Ներկայացնել նաև ապրիլյան քառօրյա պատերազմի հերոսներին:	Դասղեկ, աշակերտներ
32-րդ շաբաթ	«Մեր փոքրիկ բարեկամները»	Նպատակն է սովորեցնել աշակերտներին հարգալից լինել ոչ միայն իրենցից մեծերի, այլ փոքրերի նկատմամբ, օգնել նրանց դժվարությունների դեպքում:	Դասղեկ, աշակերտներ
33-րդ շաբաթ	«Ինչ է ազնվությունը»	Սովորողներին ներկայացնել ազնիվ լինելու դրական կողմերը, անազնվության բացասական հետևանքները մարդու կյանքի և գործունեության վրա: Սովորեցնել, որ ազնիվ մարդը գնահատվում է հասրակության մեջ:	Դասղեկ, աշակերտներ
34-րդ շաբաթ	«Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին»	Նպատակն է ամփոփել ուսումնական տարին, ամառային արձակուրդներին հանձնարարել գրքեր կարդալ:	Դասղեկ, աշակերտներ